«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, 0025
Սայաթ-Նովա 40/1
Հեռ.՝ (+374 11) 44-44-44
Ֆաքս՝ (+374 60) 44-44-41
Էլ. փոստ՝ info@ucom.am
Վեբ կայք՝ www.ucom.am

"UCOM" LLC
40/1 Sayat-Nova Ave.
Yerevan 0025, Armenia
Phone: (+374 11) 44-44-44
Fax: (+374 60) 44-44-41
E-mail: info@ucom.am
Web: www.ucom.am

# ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1.1 Սույն պայմանները սահմանում են «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝Օպերատոր) կողմից էլեկտրոնային հաղորդակցության /հեռահաղորդակցության/ և հարակից այլ ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներն ու պայմանները:
1.2 Սույն պայմանները հանդիսանում են հրապարակային առաջարկ/օֆերտա/, որն ընդունելու /ակցեպտավորելու/ պահից հանդիսանում է Օպերատորի և Բաժանորդի /երկուսը միասին համատեղ հիշատակման դեպքում այսուհետ կանվանվեն՝ Կողմեր/ միջև կնքված՝ Կողմերի համար պարտադիր ուժ ունեցող պայմանագիր: Օպերատորին ներկայացված համապատասխան դիմումը և/կամ սույն պայմանների կատարմանն ուղղված գործողությունների կատարումը համարվում է սույն օֆերտայի պայմանների ընդունում/ակցեպտավորում/:
1.3 Սույն պայմանները դիմումի և Օպերատորի կողմից սահմանված կիրառելի կանոնների, կարգերի և սակագների/գնացուցակի/ հետ միասին կհանդիսանա Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված՝ Բաժանորդային պայմանագիր/այսուհետ՝ պայմանագիր/:
1.4 Բաժանորդը կարող է սույն հրապարակային օֆերտան ակցեպտավորել նաև էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով բաժանորդագրման կարգը, պայմաններն ու առանձնահատկությունները սահմանվում են առանձին կանոններով, որոնք հրապարակվում են Օպերատորի վեբ կայքում և ներկայացվում Օպերատորի սպասարկման կենտրոններում:

## 2. Սահմանումներ

**Էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ/այսուհետ՝ Ծառայություններ/**՝ Օպերատորի կողմից մատուցվող ներքոգրյալ ծառայությունները, որոնց մանրամասն նկարագրությունները հրապարակված են Օպերատորի վեբ կայքում և ներկայացված են Օպերատորի սպասարկման կենտրոններում.

- Լայնաշերտ ինտերնետ
- Այ Փի հեռուստատեսություն
- Ֆիքսված հեռախոսակապ

Յուրաքանչյուր Ծառայության մատուցման հետ կապված Օպերատորի կողմից կարող են սահմանվել հատուկ դրույթներ ու պայմաններ և/կամ այդ Ծառայությունից օգտվելու հատուկ կանոններ, որոնք կհրապարակվեն Օպերատորի վեբ կայքում և կներկայացվեն Օպերատորի սպասարկման կենտրոններում:
**Օպերատորի ցանց**՝ <<Յուքոմ>> ՍՊԸ-ին պատկանող հաղորդման հարմարություններ կամ համակարգ, իսկ համապատասխան դեպքերում համակցման կամ ուղղորդման սարքավորումներ և այլ ռեսուրսներ, որոնք թույլ են տալիս տվյալներ փոխանցել մալուխով, ռադիոյով, օպտիկական կամ այլ էլեկտրամագնիսական միջոցներով, ներառյալ արբանյակային ցանցը:
**Օպերատորի ցանցի հասանելիության տարածք**՝ աշխարհագրական այն կոնկրետ վայրը/տարածքը/, որտեղ տեխնիկապես հասանելի են Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունները:
Բնակարանը/առանձնատունը/տարածքը, այսուհետ՝ տարածք, որտեղ Օպերատորի կողմից Բաժանորդային պայմանագրի համաձայն մատուցվելու են Ծառայություններ, չպետք է հանդիսանա/ծառայի որևէ իրավաբանական անձի և/կամ անհատ ձեռնարկատիրոջ փաստացի գործունեության վայր և/կամ ֆիզիկական անձի կողմից շահույթ ստանալու նպատակով օգտագործվող գործունեության վայր կամ ցանկացած դեպքում Օպերատորի կողմից որպես այդպիսին որակված փաստացի կամ շահույթ ստանալու նպատակով օգտագործվող գործունեության վայր: Բացառություն կարող են կազմել միայն այն դեպքերը, երբ Բաժանորդը բաժանորդագրվել է (ցանկանում է օգտվել) Օպերատորի կողմից սահմանված և հրապարակված հատուկ սակագնային փաթեթներից:
**Բաժանորդ**՝ ցանկացած ֆիզիկական անձ, ով Օպերատորի ցանցի հասանելիության տարածքում Օպերատորի կողմից առաջարկվող Ծառայություններից օգտվելու համար սույն պայմանների պահպանմամբ միացել է սույն պայմանագրին:
**Ցանցային միացումներ**՝ մալուխով և/կամ ռադիոփոխանցման միջոցով միացում հեռահաղորդակցության միացման ենթակառուցվածքներին՝ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովելու համար:

**Դիմում/հայտ/**՝ սույն պայմանագրի կողմ դառնալու ու Օպերատորի կողմից առաջարկվող Ծառայություններից օգտվելու համար ֆիզիկական անձի կողմից լրացված, ստորագրված և Օպերատորին ներկայացված, վերջինիս կողմից սահմանված ձևի գրավոր փաստաթուղթ:
**Օպերատորի վեբ կայք**՝ www.ucom.am:
**Սակագնային Պլան/Փաթեթ**՝ որոշակի հատկանիշներով օժտված Ծառայություն, որն ընտրում է Բաժանորդը և որի անվանումը, առանձնահատկությունները, սակագները, մանրամասնությունները և այլ տեղեկությունները ներկայացված են Օպերատորի սպասարկման կենտրոններում և հրապարակված են Օպերատորի վեբ կայքում:
**Սարք**՝ այն սարքավորումը կամ սարքավորումները, որի/որոնց միջոցով Օպերատորը մատուցում է իր Ծառայությունները: Սարքի/երի ավելի մանրամասն նկարագրությունը ներկայացված է Օպերատորի վեբ կայքում:
**Բիլինգային համակարգ**՝ հաշվարկների վարման ավտոմատացված համակարգ:
**Անձնական հաշիվ**՝ բիլինգային համակարգում վարվող անալիտիկ հաշիվ, որն օգտագործվում է Բաժանորդին մատուցվող Ծառայությունների ծավալների և դրանց դիմաց գանձվող վճարումների հաշվառման համար:
Հեռախոսահամար՝ համար, որն օգտագործվում է ֆիքսված հեռախոսային ցանցում Բաժանորդին նույնականացնելու և սույն պայմանագրի համաձայն ծառայություններ մատուցելու համար:
**Դիմումի համար/ID/**՝ թվերի համակցություն, որն օգտագործվում է Բաժանորդի նույնականացման և Բաժանորդի կողմից իր Անձնական հաշիվ մուտք գործելու ու վճարումներ կատարելու համար:
**Գաղտնաբառ**՝ տառերի և/կամ թվերի համակցություն, որն օգտագործվում է Բաժանորդի նույնականացման համար:

**3.Ծառայությունների մատուցման կարգը**

3.1 Դիմումն ընդունելուց հետո, եթե Բաժանորդի կողմից պահպանվել են սույն պայմանագրի բոլոր պահանջները, Բաժանորդի տարածքում, Օպերատորի մասնագետների կողմից հնարավորինս սեղմ ժամկետներում տեղադրվում և կարգաբերվում է Սարքը և միացվում Օպերատորի ցանցին՝ Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունները պատշաճ կերպով ստանալու համար:
3.2 Ծառայությունների ցանկը, Սակագնային Պլանները/Փաթեթները/ ընտրվում են Բաժանորդի կողմից և Բաժանորդն իրավունք ունի Օպերատորի կողմից սահմանված կարգին համապատասխան փոփոխելու դրանք՝ ստորագրելով համապատասխան դիմումը և ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը:
3.3 Օպերատորի կողմից մատուցվող բոլոր Ծառայությունների, Սակագնային Պլանների/Փաթեթների/ առանձնահատկությունները, բնույթը, նկարագրությունը, դրանց նկատմամբ կիրառվող սակագները և զեղչային առաջարկները մանրամասնորեն ներկայացված են Օպերատորի սպասարկման կենտրոններում և Օպերատորի վեբ կայքում:
3.4 Այլ բան սահմանված չլինելու դեպքում Ծառայությունները մատուցվում են շուրջօրյա, առանց ընդհատումների:
3.5 Օպերատորը պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Ծառայությունների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով: Այնուամենայնիվ Բաժանորդը սույնով ընդունում է, որ Ծառայությունների մատուցումը և դրանց որակը կախված է ոչ միայն Օպերատորից, այլ նաև Օպերատորի հսկողությունից դուրս գտնվող հանգամանքներից, այդ թվում այլ օպերատորների ցանցերի աշխատանքներից:
3.6 Եթե Բաժանորդն ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող այնպիսի սերտիֆիկացված Սարք, որով ըստ Օպերատորի մասնագետների հնարավոր կլինի օգտվել Օպերատորի կողմից մատուցվող Ծառայություններից, ապա Օպերատորը կարող է Բաժանորդի ցանկությամբ, համապատասխան ցանցային միացումները ապահովելով, վերջինիս մատուցել սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունները:
3.7 Ծառայությունները մատուցվում են Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքներին, ենթաօրենսդրական ակտերին և Օպերատորին տրված լիցենզիաներին համապատասխան:
3.8 Մատուցվող Ծառայությունների որակը և ծավալը կարող է սահմանափակվել Օպերատորի կողմից՝ սույն պայմանագրի և Օպերատորի կողմից սահմանված այլ կանոնների համաձայն:
3.9 Ծառայությունների մատուցումը կարող է սահմանափակվել կամ ընդհատվել վերանորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքների ժամանակ, որոնց մասին, հնարավորության դեպքում, Օպերատորը պետք է նախօրոք տեղեկացնի Բաժանորդին:
3.10 Այլ բան սահմանված չլինելու դեպքում համարվում է, որ Բաժանորդը համաձայն է ստանալ գովազդ՝ Օպերատորի ցանցի միջոցով: Հրաժարվելու դեպքում Բաժանորդը պարտավոր է այդ մասին տեղեկացնել Օպերատորին:
3.11 Սույն պայմանագիրը և որոշ այլ փաստաթղթեր, որոնց Բաժանորդը կարող է ծանոթանալ և ձեռք բերել Օպերատորի վեբ կայքից, Բաժանորդի կողմից չպահանջելու դեպքում թղթային տարբերակով վերջինիս չեն տրամադրվում:

3.12 Սույն պայմանագրի կողմ դառնալով Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը՝ այն օպերատորի բջջային ցանցի միջոցով, որի բաժանորդն ինքը հանդիսանում է, ստանալու գովազդային, առևտրային և/կամ այլ հաղորդագրություններ՝ կապված Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունների հետ: Դրանք ստանալուց հրաժարվելու դեպքում՝ Բաժանորդը պետք է գրավոր տեղեկացնի Օպերատորին:

**4. Պահանջվող փաստաթղթեր**

4.1 Բաժանորդագրման Դիմում լրացնելու համար ֆիզիկական անձը պետք է ներկայացնի իր անձնագիրը, որը վավերական է և ուժի մեջ է:
4.2 Ծառայությունների, Սակագնային Պլանների/Փաթեթների/ ցանկը փոփոխելու, ժամանակավոր կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում անձը հաստատող փաստաթուղթ:
4.3 Օպերատորին ներկայացվող անձը հաստատող փաստաթուղթը պետք է պարունակի համապատասխան անձի լուսանկարը:
4.4 Բաժանորդը պետք է ներկայացնի նաև այն տարածքի նկատմամբ իր իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, որտեղ պետք է տեղադրվի Սարքը և մատուցվեն Ծառայությունները:
4.5 Իրեն մատուցվող Ծառայությունների վերծանումները ստանալու համար Բաժանորդը պետք է ներկայացնի իր անձնագիրը, իսկ եթե վերջինս լիազորել է այլ անձի, ապա լիազորված անձը պետք է ներկայացնի նոտարական հաստատմամբ Բաժանորդի կողմից իրեն տրված լիազորագիրը և իր անձնագիրը:
4.6 Բաժանորդի կողմից Օպերատորին ներկայացված փաստաթղթերով հավաստվող տվյալների փոփոխության դեպքում, Բաժանորդը պարտավոր է 30/երեսուն/ օրվա ընթացքում այդ մասին հայտնել Օպերատորին և ներկայացնել նոր տվյալները հավաստող փաստաթուղթը:
4.7 Անհրաժեշտություն առաջանալու դեպքում Բաժանորդը և/կամ նրա լիազորված անձը պետք է ներկայացնի նաև Օպերատորի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր:

**5. Սարքի օգտագործումը, պահպանումը**

5.1 Սարքը և մալուխը հանձնվում են Բաժանորդին և հետ են վերցվում նրանից Կողմերի միջև կազմված փոխադարձ հանձնման-ընդունման ակտով, որը կազմում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
5.2 Բացառությամբ սույն պայմանագրի 3.6 կետում նախատեսված դեպքի՝ Օպերատորի կողմից տրամադրվող Սարքը և մալուխը, ինչպես նաև դրանց պատկանելիքներն ու մասերը և/կամ դրանց վրա Օպերատորի կողմից կատարված ցանկացած փոփոխություն կամ վերանորոգում, համարվում է Օպերատորի սեփականությունը և Բաժանորդը չի կարող այն փոխանցել, վարձակալությամբ տրամադրել կամ փոփոխության ենթարկել որևէ կերպ, եթե այլ բան գրավոր ձևով համաձայնեցված չէ Կողմերի միջև:
5.3 Սարքի սխալ օգտագործման, պատահական կորստի, վնասվածքի կամ հափշտակության ռիսկը փոխանցվում է Բաժանորդին՝ Սարքը ընդունելուց և հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո:
5.4 Սարքի կորստի կամ հափշտակության դեպքում Բաժանորդը պարտավորվում է դրա մասին, ոչ ուշ քան 10/տաս/օրվա ընթացքում զգուշացնել Օպերատորին այդ մասին՝ գրավոր նամակի տեսքով: Նամակին պետք է կցվի Սարքի հափշտակության մասին ոստիկանական ծառայությունների կողմից տրված պատշաճ տեղեկանք/նման տեղեկանքի առկայության դեպքում/:
5.5 Նոր Սարքի տրամադրումը բաժանորդագրումից հետո տրամադրված Սարքի կորստի, հափշտակության կամ վնասման դեպքում հնարավոր է՝ Բաժանորդի կողմից Սարքի դիմաց փոխհատուցելու դեպքում միայն:
5.6 Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին տրամադրված Սարքը անվճար փոխարինել նորով, եթե Օպերատորի կողմից այն ճանաչվել է արտադրական թերություն ունեցող:
5.7 Օպերատորի կողմից Սարքը վերադարձնելու պահանջը ստանալու պահից (նույնիսկ Սարքի ժամանակավոր վերադարձման դեպքում) Բաժանորդը պարտավորվում է այլևս չօգտագործել Սարքը և այն հնարավորինս սեղմ ժամկետներում հանձնել Օպերատորին:

**6. Սակագները և վճարման կարգը**

6.1 Ծառայությունների նկատմամբ կիրառվում են Բաժանորդի կողմից ընտրված Սակագնային Պլանի/Փաթեթի/ համար Օպերատորի կողմից սահմանված սակագները, որոնք հրապարակված են Օպերատորի վեբ կայքում և ներկայացված են Օպերատորի սպասարկման կենտրոններում:

6.2 Սահմանված սակագները կարող են Օպերատորի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ սույն պայմանների 14.2 կետով սահմանված կարգով: Օպերատորը սակագների փոփոխության մասին Բաժանորդներին տեղեկացնում է ոչ ուշ, քան նոր սակագների ներդրումից 30/երեսուն/ օր առաջ, բացառությամբ սակագների նվազեցման, ինչպես նաև Բաժանորդի համար այլ բարենպաստ պայմաններ սահմանելու դեպքերի:
6.3 Բաժանորդի կողմից վճարման ենթակա ամսական գումարները հաշվարկվում և վճարվում են ամեն ամիս՝ մինչև Ծառայությունների մատուցմանը հաջորդող ամսվա 15-րդ օրը, անկախ այն հանգամանքից Բաժանորդը տվյալ ամիս օգտվել է Ծառայություններից, թե՝ ոչ:
6.4 Որոշակի Ծառայություններ մատուցելու համար Օպերատորը կարող է պահանջել կանխավճար, գումարային դեպոզիտ կամ բանկային երաշխիք: Վճարումը մասամբ կամ ամբողջությամբ ուշացնելու դեպքում, Օպերատորն իրավունք ունի նվազեցնել պարտքի գումարը երաշխիքային և/կամ կանխավճարային գումարից:
6.5 Օպերատորը պետք է Բիլինգային համակարգի /նաև այլ օպերատորների բիլինգային համակարգերի/ տվյալների հիման վրա պատրաստի ամսական ամփոփ հաշիվները և փոխանցի այն իր սպասարկման կենտրոններ և/կամ սպասարկող կազմակերպությանը կամ վճարների հավաքագրում իրականացնող իր գործակալին ՝ մինչև Ծառայությունների մատուցմանը հաջորդող ամսվա 5-րդ օրը: Տեխնիկական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ մատուցված որոշ ծառայությունների համար Բաժանորդից գանձվող գումարները կարող են Անձնական հաշվում արտացոլվել ուշացումով:
6.6 Բաժանորդը պետք է ճշտի իր ամսական պարտքը և վճարի այն մինչև Ծառայությունների մատուցմանը հաջորդող ամսվա 15-րդ օրը: Ժամկետանց վճարումների նկատմամբ Օպերատորն իրավասու է կիրառել տույժ՝ վճարման ենթակա գումարի 0,15 տոկոսի չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար, իսկ ավելի քան 365 օր ուշացնելու դեպքում նաև տուգանք՝ վճարման ենթակա գումարի 50/հիսուն/ տոկոսի չափով:
6.7 Առանձին դեպքերում Օպերատորը կարող է փոփոխության ենթարկել Բաժանորդների կողմից Ծառայությունների դիմաց վճարումների կարգը, ժամկետները և եղանակը: Ցանկացած դեպքում Բաժանորդն է պարտավոր անձամբ ճշտել իր ամսական պարտքը և պատասխանատվություն է կրում այն ժամանակին վճարելու համար:
6.8 Բաժանորդի օգտին վճարում կատարող ցանկացած անձ, վճարումներ կատարելու մասով, համարվում է Բաժանորդի կողմից պատշաճ կերպով լիազորված և վերջինիս անունից գործող:
6.9 Որևէ վճարում սույն պայմանագրով սահմանված ժամկետից Բաժանորդի կողմից ուշացվելու դեպքում, Օպերատորն իրավունք ունի սեփական հայեցողությամբ ու առանց Բաժանորդին նախօրոք ծանուցման միակողմանի կասեցնել մատուցվող Ծառայությունները և ապամոնտաժել իր մալուխներն ու Սարքը: Օպերատորը կարող է գանձել վճար՝ կասեցված Ծառայությունները վերաակտիվացնելու կամ ապամոնտաժված մալուխներն ու Սարքը կրկին տեղադրելու և Օպերատորի ցանցին վերամիացնելու համար: Ամեն դեպքում Ծառայությունների կասեցումը և/կամ Սարքի, մալուխի ապամոնտաժումը չի ազատում Բաժանորդին իր պարտք մնացած գումարը/վճարը/ Օպերատորին վճարելու պարտավորությունից:
6.10 Անկախ վճարման ձևից և եղանակից, Բաժանորդը պարտավոր է վճարումները կատարել ժամանակին և պատշաճ կարգով:
6.11 Սույնով Բաժանորդը տալիս է նաև իր համաձայնությունը Օպերատորին՝ ուղղումներ կատարելու սխալ վճարումներում, ներառյալ սխալ վճարման փոխանցումը Բաժանորդի հաշվից՝ ճիշտ հասցեատիրոջը:
6.12 Բաժանորդի անունից իր մեղքով սխալ հաշվեհամարին կատարված ցանկացած վճարում ենթակա է ուղղման Օպերատորի կողմից հնարավոր սեղմ ժամկետներում, և Օպերատորը պատասխանատվություն չի կրում դրա հետևանքով Բաժանորդի կրած վնասների համար:

**7. Օպերատորի իրավունքներն ու պարտականությունները**

**7.1 Օպերատորը պարտավոր է՝**
7.1.1 Սույն պայմանագրի գործողության ընթացքում Ծառայություններից օգտվելու համար Բաժանորդին հատկացնել Սարքը և կատարել համապատասխան ցանցային միացումներ:
7.1.2 Բաժանորդին տրամադրել ճշգրիտ տեղեկատվություն՝ Օպերատորի ցանցի հասանելիության, Բաժանորդի կողմից ընտրված Սակագնային Պլանով/Փաթեթով/ նախատեսված Ծառայությունների առանձնահատկությունների, հատկանիշների, Ծառայությունների մատուցման պայմանների և Անձնական հաշվի մնացորդի մասին:
7.1.3 Առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում ապահովել Ծառայություններից օգտվելու Բաժանորդի հնարավորությունը:
7.1.4 Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն ապահովելու համար իր կողմից մատուցվող Ծառայությունների պատշաճ որակը:

7.1.5 Հասանելի դարձնել սույն պայմանագրի շրջանակներում մատուցվող Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը, կանոններն ու պայմանները:

**7.2 Օպերատորն իրավունք ունի՝**

7.2.1 Սույն պայմանագրով սահմանված կարգով ինքնուրույն սահմանել և ժամանակ առ ժամանակ փոփոխել Ծառայությունների ցանկը, Սակագնային Պլանները/Փաթեթները/, դրանց մատուցման պայմանները, կանոնները և սակագները:

7.2.2 Կարճաժամկետ սահմանափակում կիրառել Ծառայությունների ծավալների նկատմամբ այն դեպքում, երբ Ծառայությունների մատուցումը խախտում է (կարող է խախտել) երրորդ անձանց իրավունքները կամ տվյալ սահամանափակումը պայմանավորված է տեխնիկական աշխատանքների իրականացման անհրաժեշտությամբ:

7.2.3 Հավելյալ ծառայությունների համար Բաժանորդից պահանջել առանձին վճար:

7.2.4 Առանց նախնական ծանուցման միակողմանի կարգով հրաժարվել Բաժանորդային պայմանագիրը կատարելուց, եթե Բաժանորդը չի վճարում իրեն մատուցված Ծառայությունների համար Բաժանորդային պայմանագրում նշված ժամկետը լրանալուց 60 (վաթսուն) օր հետո:

7.2.5 Բաժանորդի տարածքում ցանցային միացումներ կատարելու համար Բաժանորդից պահանջելու միացման վճար, եթե Օպերատորի կողմից օգտագործված նյութերի քանակը և կատարված աշխատանքների ծավալը գերազանցում են Օպերատորի կողմից սահմանված նորմերը և եթե դա նախօրք համաձայնեցվել է Բաժանորդի հետ:

7.2.6 Բաժանորդի կողմից սույն պայմանագրի պայմանների և կետերի խախտման դեպքում միակողմանի հրաժարվել սույն պայմանագրից և ապամոնտաժել իր կողմից տեղադրված մալուխներն ու Սարքը:

7.2.7 Տեխնիկական անհրաժեշտության կամ իրավական ակտերով նախատեսված դեպքերում նախօրոք տեղեկացնելով Բաժանորդին՝ փոփոխել վերջինիս Հեռախոսահամարը:

**8. Բաժանորդի իրավունքներն ու պարտականությունները**

**8.1 Բաժանորդը պարտավոր է՝**

8.1.1 Կատարել սույն պայմանագրի և Օպերատորի կողմից սահմանված ու հրապարակված այլ կանոնների, պայմանների ու կանոնակարգերի պահանջները և հետևել դրանց ընթացքին:

8.1.2 Ժամանակին վճարել Օպերատորի կողմից մատուցված Ծառայությունների դիմաց:

8.1.3 Ծառայություններից օգտվել օրենքին, սույն պայմանագրին և Օպերատորի կողմից սահմանված այլ կանոններին ու չափանիշներին համապատասխան՝ առանց խախտելու կամ վնասելու երրորդ անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Զերծ մնալ օրենքին հակասող ցանկացած եղանակով Օպերատորի մատուցած Ծառայություններն օգտագործելուց:

8.1.4 Որևէ կերպ չտրամադրել/չփոխանցել/ Օպերատորի կողմից իրեն մատուցվող Ծառայությունները՝ երրորդ անձի:

8.1.5 Չօգտագործել Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունները առևտրային, գովազդային բնույթի, այդ թվում՝ էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցելու համար:

8.1.6 Առանց Օպերատորի գրավոր համաձայնության երրորդ անձանց՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն, վճարովի կամ անհատույց կարգով չփոխանցել սույն Պայմանագրով իր ստանձնած իրավունքներն ու պարտականությունները:

8.1.7 Չօգտագործել իրեն տրամադրված Սարքը անհամատեղելի այլ սարքավորումների հետ և որևէ այլ եղանակով, որը կարող է ազդել Օպերատորի ցանցի կամ սարքավորումների ապահով և անխափան աշխատանքի վրա:

8.1.8 Օպերատորի կողմից իրեն տրամադրված Սարքը պահպանել պատշաճ և սարքին վիճակում, դրան վերաբերվել խնամքով, զերծ մնալ դրա ոչ պատշաճ օգտագործումից:

8.1.9 Սարքը չտեղափոխել առանց Օպերատորի թույլտվության:

8.1.10 Սարքը օգտագործել այն վայրում որտեղ այն տեղադրվել և կարգաբերվել է Օպերատորի մասնագետների կողմից:

8.1.11 Ստուգել և Օպերատորին գրավոր հայտնել ամսական հաշիվներում տեղ գտած անհամապատասխանությունների մասին Ծառայությունների մատուցման համապատասխան ամսվա ավարտից հետո՝ 45/քառասունհինգ/ օրվա ընթացքում: Նշված ժամանակահատվածում նման անհամապատասխանության մասին չհայտնելու դեպքում հաշիվը համարվում է Բաժանորդի կողմից անվերապահորեն ընդունված, և Բաժանորդը չի կարող այլևս վիճարկել կամ առարկություններ ներկայացնել Օպերատորի կողմից Բաժանորդին ներկայացված հաշվի վերաբերյալ:

8.1.12. Բաժանորդային պայմանագրի լուծման դեպքում (անկախ լուծման պատճառներից) Սարքը (դրա պատկանելիքները) և մալուխը 15 (տասնհինգ) օրյա ժամկետում սարքին վիճակում (հաշվի առնելով դրանց բնական մաշվածությունը) վերադարձնել Օպերատորին (հնարավորություն ընձեռել Օպերատորի աշխատակիցներին ապամոնտաժելու դրանք):

8.1.13. 5 (հինգ) օրվա ընթացքում Օպերատորին վճարել Հանձնման-ընդունման ակտի մեջ նշված Սարքի, դրա պատկանելիքների, մալուխի արժեքը (որից նվազեցվում է բնական մաշվածության համար հաշվարկվող գումարը), եթե սույն պայմանագրի 8.1.12. կետով նախատեսված ժամկետում հետ չի վերադարձրել (հնարավորություն չի ընձեռել Օպերատորի աշխատակիցներին ապամոնտաժելու) դրանք:

**8.2 Բաժանորդն իրավունք ունի՝**

8.2.1 Օպերատորի կողմից սահմանված կարգին համապատասխան փոփոխել իրեն մատուցվող Ծառայությունների ցանկը և Սակագնային Պլանները/Փաթեթները/, եթե այլ համաձայնություն գրավոր կերպով ձեռք չի բերվել Կողմերի միջև:

8.2.2 Ստանալ իրեն մատուցված Ծառայությունների վերծանումները, ինչի համար Օպերատորը կարող է գանձել առանձին վճար:

8.2.3 Նախօրոք՝ 5/հինգ/ օր առաջ, գրավոր տեղեկացնելով Օպերատորին, միակողմանիորեն հրաժարվել սույն պայմանագրից՝ վճարելով մինչ այդ օրն իրեն մատուցված Ծառայությունների համար և Օպերատորին հանձնման-ընդունման ակտով հետ հանձնելով իրեն տրամադրված Սարքը, եթե այլ բան գրավոր կերպով սահմանված չէ կողմերի միջև:

**9. Ծառայությունների մատուցման սահմանափակումը, կասեցումը, դադարեցումը և վերաակտիվացումը**

9.1 Օպերատորն իրավունք ունի կասեցնել, սահմանափակել կամ դադարեցնել Բաժանորդին մատուցվող Ծառայությունները՝ առանց այդ մասին վերջինիս նախնական ծանուցման, եթե Բաժանորդը՝

- սահմանված ժամկետում չի վճարել իրեն մատուցված Ծառայությունների համար.
- օգտագործել է չսերտիֆիկացված և/կամ Օպերատորի ցանցի հետ անհամատեղելի կամ Օպերատորի ցանցի պատշաճ աշխատանքին խոչընդոտող սարք.
- խախտել է սույն պայմանագրի պայմանները կամ գործող օրենսդրության պահանջները.
- ոչ ճիշտ կամ ոչ ամբողջական տեղեկություն և/կամ փաստաթղթեր է ներկայացրել Օպերատորին.
- սույն պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները ոչ պատշաճ/ոչ բարեխիղճ/ է կատարել.
- Սարքի կորստի կամ հափշտակության դեպքում,
- երրորդ կողմի պատճառով առաջացած ազդանշանների ուշացումների, դադարեցումների կամ կապի խզման դեպքում:

9.2 Անվճար կարգով Բաժանորդը կարող է ժամանակավոր դադարեցնել/կասեցնել/ իրեն մատուցվող Ծառայությունները նվազագույնը 10/տաս/ օրյա, իսկ առավելագույնը՝ երկամսյա ժամկետով՝ Օպերատորին ներկայացնելով համապատասխան դիմումը և վճարելով մինչ այդ օրն իրեն մատուցված Ծառայությունների դիմաց:

9.3 Բաժանորդի կողմից դիմումում նշված՝ Ծառայությունների մատուցումը ժամանակավոր դադարեցնելու/կասեցնելու/ ժամկետը լրանալուց հետո Բաժանորդին մատուցվող Ծառայություններն ավտոմատ կերպով վերսկսվում են, և Օպերատորը պարտավոր չէ Բաժանորդին այդ մասին լրացուցիչ ծանուցելու կամ հիշեցնելու:

9.4 Եթե Բաժանորդը ցանկանում է ժամանակավոր դադարեցնել/կասեցնել/ իրեն մատուցվող Ծառայություններն ավելի քան երկամսյա ժամկետով, ապա նա համապատասխան դիմումը ներկայացնելուց հետո պարտավոր է Օպերատորին հետ վերադարձնել Սարքը և վճարել Օպերատորի կողմից սահմանված վճարը:

9.5 Ծառայությունների մատուցման կասեցման, սահմանափակման կամ դադարեցման դեպքում վերաակտիվացում և/կամ վերամիացում կարող է կատարվել Օպերատորի նկատմամբ ունեցած վճարային պարտքը, տույժերը, եթե այդպիսիք հաշվարկվել են, վերաակտիվացման համար գանձվող վճարը և Օպերատորի կողմից կատարած աշխատանքների դիմաց վճարները և այլ փաստացի կատարված ծախսերը՝ Բաժանորդի կողմից վճարվելու դեպքում միայն:

9.6 Ֆիքսված հեռախոսակապի մատուցման ծառայության կասեցումը, ժամանակավոր դադարեցումը կամ սահմանափակումը չի ազատում Բաժանորդին ամսական հաշվարկվող բաժանորդային վճարումները կատարելու պարտավորությունից:

9.7 Եթե Բաժանորդը հանդիսանում է մեկից ավելի Ծառայություններից օգտվող և սույն պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարում որևէ մեկ Ծառայության համար, Օպերատորը կարող է կասեցումը կամ սահմանափակումը կիրառել մնացած բոլոր Ծառայությունների համար ևս:

**10. Կողմերի պատասխանատվությունը**

10.1 Բաժանորդը սեփական ռիսկով է օգտվում Օպերատորի կողմից մատուցվող Ծառայություններից: Օպերատորը չի կարող որոշել Ծառայությունների համապատասխանությունը Բաժանորդի կարիքներին:
10.2 Օրենքի թույլատրելի սահմաններում Կողմերը սույնով հրաժարվում են միմյանց անուղղակի վնասների և բաց թողնված օգուտների հատուցման պահանջներից: Ցանկացած պարագայում Օպերատորի պատասխանատվությունը յուրաքանչյուր Բաժանորդի մասով չի կարող գերազանցել տվյալ Բաժանորդին մատուցվող Ծառայությունների դիմաց տվյալ ամսվա համար գանձվող ամսական գումարի՝ Օպերատորի մեղքով Ծառայություններից օգտվելու անհնարինության ժամկետին համամասնորեն հաշվարկված գումարը:
10.3 Սույն պայմանների 8.1.13. կետով նախատեսված գումարը 5 (հինգ) օրվա ընթացքում չվճարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի իր հայեցողությամբ Բաժանորդից պահանջել վճարելու տույժ՝ ուշացված յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
10.4 Օպերատորը պատասխանատվություն չի կրում.
- Դժբախտ պատահարի կամ իր գործընկերների/այդ թվում՝ օտարերկրյա/ կամ գործակալների միջոցով փոխանցվող ազդանշանների կամ մատուցվող ծառայությունների խափանման կամ դադարեցման հետևանքով առաջացած ընդհատումների, անջատումների, խափանումների կամ որոշակի տեսակի Ծառայությունների, Սակագնային Պլանների/Փաթեթների/ մեջ կատարված փոփոխությունների համար:
- Բաժանորդին պատկանող համակարգչի/ների կամ այլ սարքավորման/ումների անսարքության պատճառով Ծառայությունների պատշաճ չընդունման կամ ընդհատման համար:
- Աշխատանքների, մասնավորապես՝ ընթացիկ, ցանցի ամրապնդման, պահպանման, ընդարձակման կամ վերանորոգման հետևանքով առաջացած ընդհատումների և խափանումների համար, եթե դրանք չեն գերազանցում ամսական 48/քառասունութ/ ժամը:
10.5 Օպերատորը ոչ մի վերահսկողություն չի իրականացնում իր ցանցով տեղափոխվող տեղեկատվության նկատմամբ և պատասխանատու չէ Բաժանորդի կողմից ստացված տեղեկատվության և բովանդակության ճշտության համար: Օպերատորի՝ ցանցի միջոցով տեղափոխվող ցանկացած տեղեկատվություն կամ բովանդակություն օգտագործվում է Բաժանորդի ռիսկով և պատասխանատվությամբ, սակայն այդպիսի տեղեկատվության և բովանդակության հետ կապված մտավոր սեփականության իրավունքները պետք է պահպանվեն:
10.6 Օպերատորը պարտավոր չէ 6 /վեց/ ամսից ավելի պահպանել մատուցված Ծառայությունների մասին տեղեկությունները:
10.7 Օպերատորը պատասխանատվություն չի կրում սպամի, հակերային գործունեության, վիրուսների փոխանցման և դրա հետևանքով Բաժանորդին պատճառված վնասների համար:
10.8 Բաժանորդն է Օպերատորի համար հանդիսանում միակ պատասխանատուն՝ սույն պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, վճարումները ժամանակին չվճարելու, ինչպես նաև Օպերատորին պատճառված իրական վնասի համար:
10.9 Բաժանորդը պարտավոր է անձամբ ճշտել իր ամսական պարտքը և պատասխանատվություն է կրում այն ժամանակին վճարելու համար՝ անկախ վճարման միջոցից և հաշիվը ստանալու փաստից:
10.10 Օպերատորը պատասխանատվություն չի կրում վճարումներն ընդունող միջնորդի կողմից սահմանված կանոնների համաձայն որևէ լրացուցիչ միջնորդավճարի գանձման համար:
10.11 Բաժանորդը ընդունում է Օպերատորի կողմից Ծառայությունների կասեցումը կամ դադարեցումը նույնիսկ առանց նախազգուշացման՝ ցանցի խափանման կամ երրորդ անձի կողմից՝ Օպերատորին մատուցվող ծառայության անսպասելի դադարեցման դեպքում:
10.12 Բաժանորդը պատասխանատու է Սարքի, և այն օգտագործելու համար իրեն փոխանցված կամ Սարքին միացված սարքավորումների, մալուխների, լարերի և այլ պարագաների համար: Եվ դրանց փչացման, սխալ օգտագործման, կորստի, վնասվածքի կամ հափշտակության դեպքում պարտավոր է Օպերատորին փոխհատուցել դրանց դիմաց:
10.13 Բաժանորդը պատասխանատվություն է կրում Օպերատորի կողմից իրեն մատուցվող Ծառայությունները երրորդ անձի կողմից ցանկացած կերպ օգտագործելու համար:

**11. Անհաղթահարելի ուժի ազդեցություն /ֆորս-մաժոր/**

11.1 Կողմերը պատասխանատվություն չեն կրում սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու կամ դրանց կատարումն ուշացնելու դեպքում, եթե դա հետևանք է ջրհեղեղի, հրդեհի, երկրաշարժի, այլ բնական աղետի, պատերազմական գործողության, զինված հարձակման, պայթյունի զանգվածային խռովության, գործադուլի, պետական մարմնի կողմից ընդունված ակտի, մայրուղային ենթակառուցվածքների խաթարման, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցման:

11.2 Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանիորեն հրաժարվել սույն պայմանագրի կատարումից, եթե ֆորս-մաժորային իրավիճակը շարունակվում է երեք ամսից ավելի:

**12. Պայմանագրի գործողության ժամկետը**

12.1 Այլ բան սահմանված չլինելու դեպքում սույն պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:

**13. Գաղտնիություն և անվտանգություն**

13.1 Օպերատորը պարտավորվում է գաղտնի պահել Բաժանորդի մասին տվյալները, նրան մատուցված ծառայությունների տեսակի, ծավալի, վայրի, ժամանակի և այլ տեխնիկական պայմանների վերաբերյալ ցանկացած տեղեկություն, բացառությամբ այն դեպքերի, երբ դա պահանջվում է օրենքով կամ անհրաժեշտ է Օպերատորի իրավունքների պաշտպանության համար:
13.2 Բաժանորդին կամ վերջինիս անունից նոտարական կարգով հաստատված լիազորագրի հիման վրա հանդես եկող լիազորված անձին այդ տեղեկությունները կարող են տրամադրվել միայն նրանց կողմից տրված դիմումի հիման վրա, որի համար Օպերատորի կողմից կարող է գանձվել առանձին վճար:
13.3 Բաժանորդի կողմից ուղարկված և ստացված ողջ տեղեկությունը մասնավոր է և գաղտնի, այն ենթակա չէ հրապարակման՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

**14. Պայմանագրի պայմանների փոփոխման և վեճերի լուծման կարգը**

14.1 Սույն օֆերտան 2011թ-ի մայիսի 21-ից փոխարինում է նախկինում Օպերատորի կողմից Բաժանորդներին ծառայությունների մատուցման օֆերտային և դրա հիման վրա կնքված պայմանագրերի պայմանները համարվում են ամբողջովին փոխարինված սույն օֆերտայի պայմաններով: Սույն օֆերտայի կատարման օրվա դրությամբ գործող Սակագնային Պլանները/Փաթեթները/ մնում են ուժի մեջ:
14.2 Օպերատորն իրավունք ունի ժամանակ առ ժամանակ սեփական հայացողությամբ կատարել հրապարակային առաջարկ/օֆերտա/ Բաժանորդային պայմանագրի պայմանները, այդ թվում կիրառվող Ծառայությունները, Սակագնային Պլանները/Փաթեթները/, սակագները և վճարման կանոնները փոփոխելու մասին՝ այդ փոփոխություններն առնվազն 30/երեսուն/ օր առաջ Օպերատորի վեբ կայքում հրապարակելու և բաժանորդների սպասարկման կենտրոններում ներկայացնելու միջոցով և/կամ ՀՀ-ում 3000/երեք հազար/ տպաքանակ ունեցող առնվազն մեկ թերթում հրապարակային հայտարարություն տպելու միջոցով և/կամ Օպերատորի կողմից ընդունելի այլ եղանակով ծանուցելով Բաժանորդներին՝ բացառությամբ Բաժանորդի համար բարենպաստ պայմաններ նախատեսելու դեպքերի:
14.3 Սույն պայմանագրի 14.2 կետի համաձայն առաջարկված փոփոխությունների հետ համաձայն չլինելու դեպքում, Բաժանորդն իրավունք ունի միակողմանի կարգով լուծելու սույն պայմանագիրը՝ մինչև փոփոխություններն ուժի մեջ մտնելու համար նախատեսված ժամկետը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Օպերատորին: Եթե Բաժանորդի կողմից այդպիսի գրավոր դիմում չի ներկայացվում Օպերատորին, և Բաժանորդը շարունակում է օգտվել Օպերատորի կողմից մատուցվող Ծառայություններից, ապա փոփոխություններ կատարելու մասին Օպերատորի առաջարկը կհամարվի համաձայնեցված Բաժանորդի հետ և վերջինիս կողմից գործողությամբ ընդունված/ակցեպտավորված/:
14.4 Սույն պայմանագիրը մեկնաբանվում է ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան: Սույն պայմանագրով չկարգավորված կողմերի փոխհարաբերությունները կարգավորվում են Օպերատորի հրապարակած հատուկ դրույթներով, կանոններով և/կամ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:
14.5 Սույն պայմանագրի որևէ դրույթ անվավեր կամ առոչինչ ճանաչվելու դեպքում մնացած դրույթները չեն փոփոխվում և մնում են ուժի մեջ:
14.6 Սույն պայմանագրի կատարման կամ մեկնաբանման հետ ծագած բոլոր վեճերը Կողմերի միջև պետք է լուծվեն բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում բոլոր վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ՀՀ իրավասու դատարանի միջոցով:
14.7 Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, սակայն կարող է թարգմանվել և հրապարակվել /այդ թվում նաև սակագները, կանոնները և հավելյալ ծառայությունների համար գնացուցակը/ նաև այլ լեզուներով, սակայն հայերենի և այլ տարբերակների միջև հակասության դեպքում կգերակայի հայերեն տարբերակը: